ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **29. 01. 2025թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Հ. Գույյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Մ. Հովհաննիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Հ. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար***
Ա. Գրիգորյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Վ. Հարությունյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Մ. Դատումյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական***

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2024թ. սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. 2025թ. համայնքների բյուջեների կազմման գործընթացի վերաբերյալ:
3. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
4. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
5. Մարզում 2024 թ. գյուղատնտեսության ոլորտում բերքատվության վերաբերյալ:
6. Մարզի համայնքների աշխատակազմերի և համայնքային կազմակերպությունների հաշվեկշիռներում առկա մարդատար ավտոմեքենաների կրճատման վերաբերյալ:
7. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
8. 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
9. Այլ հարցեր:

Նիստի բացման խոսքում մարզպետ Ս. Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության նորանշանակ պետ, գնդապետ Ռ. Բոխյանին՝ մաղթելով նրան բարի և խաղաղ ծառայություն, արդյունավետ համագործակցություն:

Մարզպետը ներկաներին տեղեկացրեց նաև, որ ՀՀ ՊՆ ՀԶԿ Արագածոտնի մարզի զինվորական կոմիսարիատը ճանաչվել է 2024 թվականի լավագույն զինկոմիսարիատ: Այդ առիթով շնորհավորեց ՀՀ Արագածոտնի մարզի զինվորական կոմիսար Ս. Մեջլումյանին և

շնորհակալություն հայտնեց զորահավաքի կազմակերպման հետ առնչություն ունեցող բոլոր կառույցներին աշխատանքները պատշաճ կատարելու համար:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների 2024թ. սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը 2024 թվականին կազմել է 104,0%. Աշտարակ՝ 101,4%, Շամիրամ՝ 216,3%, Ապարան՝ 108,4%, Ալագյազ՝ 107,5%, Մեծաձոր՝ 111,7%, Արևուտ՝ 101,8%, Թալին՝ 110,4%, Ծաղկահովիտ՝ 89,9%: Ցածր ցուցանիշներ են արձանագրվել Ծաղկահովիտ համայնքում:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանին համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակական աշխատանքներ տանել, իսկ հավաքագրումը շարունակել նույն մեխանիզմով՝ ապահովելով հավաքագրման պլանավորված եռամսյակային ցուցանիշները: Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին առաջարկվեց հետևողական աշխատանքներ տանել ցածր ցուցանիշները մյուս տարի բարձրացնելու ուղղությամբ:

2. 2025թ. համայնքների բյուջեների կազմման գործընթացի վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ համայնքներին տրամադրվող դոտացիաները 2018 թ. համեմատությամբ 2025 թ. աճել են եռակի՝ մոտ 5 մլրդ դրամով: Ներկայացրեց տեղեկատվություն ՀՀ համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով նախատեսված հատկացումների ընդհանուր բաշխման ծավալի վերաբերյալ:

Զեկուցվեց, որ բոլոր 8 համայնքներն էլ կազմել և հաստատել են իրենց բյուջեները ավագանու որոշմամբ: Ստացել են անհրաժեշտ խորհրդատվություն և այդ գործում որևէ խնդիր չկա:

3. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ **2022** թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ընդհանուր 4 183 420 791 ՀՀ դրամ նախնական արժեքով 19 սուբվենցիոն ծրագրերից, այս պահին ավարտվել են 17 ծրագրեր: Տեղեկատվություն ներկայացվեց ընթացքի մեջ գտնվող Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների և Ապարան համայնքի Արագած, Շենավան բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման վերաբերյալ: 2022 թվականի թվով 19 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեից ֆինանսավորման չափը կազմել է՝ 1 832 028 500 դրամ:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել թվով 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական

փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել թվով 21 ծրագիր՝ ընդհանուր՝ 7 430 350 338 ՀՀ դրամ արժեքով: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր՝ 6 045 271 911 ՀՀ դրամ արժեքով: Ներկայացվեց տեղեկատվություն ընթացքի մեջ գտնվող և ավարտված 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի մասին՝ ըստ համայնքների և ոլորտների:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել **16** ծրագիր: Ընդհանուր **16** սուբվենցիոն ծրագրերի պայմանագրային արժեքը կազմում է **8 329 562 363** դրամ: Տեղեկատվություն ներկայացվեց ծրագրերի մասին ըստ ոլորտների: 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերից այժմ միայն ընթացք է տրվել Թալին քաղաքում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներին: Մնացած բոլոր ծրագրերին, եղանակային պայմաններից ելնելով, դեռևս ընթացք չի տրվել:

2025 թվականի ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի մասով ներկայացվեց, որ 2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 22 ամբողջական փաթեթ՝ ընդհանուր՝ 10 890 342 837 դրամ արժողությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել թվով 7 սուբվենցիոն ծրագրերի փաթեթներ: Ընդհանուր՝ 3 145 253 497 դրամ: Մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց ծրագրերի ուղղվածության և բաշխվածության վերաբերյալ:

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից կարևորվեց մարզի համայնքների մանկապարտեզների հարցը: ***Հանձնարարեց*** քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյանին հետևողական լինել այդ ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ, սեղմ ժամկետում հավաքագրել համայնքներում մանկապարտեզների անհրաժեշտության ու կարևորության մասին տեղեկատվությունը: Եթե համայնքն ունի մանկապարտեզի կառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման ծրագրեր, ապա նշված ծրագրերը՝ որպես սուբվենցիոն ծրագիր, կարող են ներկայացվել միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

4. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվում են ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազիֆիկացման և Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Նախատեսվում է Շամիրամ համայնքում կառուցել 15,852 կմ երկարությամբ գազատար և հիմնանորոգել Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի 1.3 կմ հատվածը:

Մրցույթների արդյունքում պատվիրված նախագծանախահաշվային փորձաքննություն անցած փաստաթղթերի հիման վրա հայտարարվել էր կապալային աշխատանքների և տեխնիկական հսկողության իրականացման մրցույթներ, որոնց ամփոփումից և համապատասխան ընթացակարգից հետո ներկայացվել է ՀՀ կառավարությանը: 2024 թվականին մրցույթների արդյունքում պատվիրված նախագծանախահաշվային փորձաքննություն անցած փաստաթղթերի հիման վրա հայտարարվել էր մարզային նշանակության 92 կմ ավտոճանապարհների գծանշման և կահավորանքով համալրման մրցույթ: Մրցույթի արդյունքում կնքվել էր կապալային աշխատանքների իրականացման պայմանագիր՝ 82.140.000 դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքները ընթացքի մեջ են, ավարտը նախատեսված է մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը: 2025թ-ին ևս նախատեսվում է իրականացնել մարզային ավտոճանապարհների կահավորանքի և գծանշման մրցույթ՝ ընթացիկ տարվան համապատասխան գումարների բաշխման արդյունքում գոյացող մոտավորապես 55մլն ՀՀ դրամ գումարի շրջանակում:

Մարզպետը կարևորեց մարզում իրականացվող բոլոր շինարարական աշխատանքների վերահսկման գործընթացը և առաջարկեց համայնքների ղեկավարներին նույնպես ընդգրկվել այդ գործում: Գծանշման աշխատանքներում բացթողումները բացառելու նպատակով, անհրաժեշտ փոփոխությունների կամ լրացումների դեպքում մեկշաբաթյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանին:

5. Մարզում 2024 թ. գյուղատնտեսության ոլորտում բերքատվության վերաբերյալ */զեկուցող՝ գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Յու.Ազատյան/*

/Զեկույցը կցվում է/:

Տեղեկատվություն ներկայացվեց մշակաբույսերի արտադրության վերաբերյալ 2024 թվականի դրությամբ /հացահատիկ և հատիկընդեղեն, կարտոֆիլ, բանջարեղեն, պտուղ-հատապտուղ, խաղող, խոտ/: Նշվեց, որ ցանքային տարածությունը 2024 թ.-ին կազմել է 24851,9հա:

Զեկուցվեց, որ ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում 01.12.2024 դրությամբ ձեռք է բերվել 71 միավոր գյուղատնտեսական տեխնիկա շուրջ 194.1 մլն դրամ արժողությամբ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար 2024 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 98.4 մլն դրամ: Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակում 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար Արագածոտնի մարզում ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 5 ապահովագրության պայմանագիր՝ 7 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2024 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Արագածոտնի մարզի շահառուների կողմից ներկայացված 16 հայտ 701.6 մլն դրամի չափով, կնքվել է 397 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 79.4 մլն դրամ: ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2024 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Արագածոտնի մարզի շահառուների կողմից ներկայացված 7 հայտ 200.6 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 494.5 մլն դրամ: ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N 1220-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը (կոնսոլիդացիային) աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին «ՍԼԳ ԱԳՐՈ» ՓԲԸ-ի հետ կնքվել է գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման 7 պայմանագիր և ըստ

յուրաքանչյուրի նախատեսվում է միավորել 5-30 հա հողամասեր: ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1612-Լ որոշմամբ հաստատված փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին 1 շահառուի 3000 մ² կառուցված ջերմատնային տնտեսության համար հատկացվել է 30,0 մլն ՀՀ դրամ փոխհատուցում: ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների ծրագրի շրջանակում 2024 թվականին փոխհատուցման բաղադրիչով հիմնվել է 61,5 հա ինտնսիվ այգի փոխհատուցման գումարը կազմել է 1,06 մլրդ ՀՀ դրամ, իսկ 13 հա տարածքում ներդրվել է ոռոգման արդիական համակարգեր, որի փոխհատուցման գումարը կազմել է 12,3 մլն ՀՀ դրամ: ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի շրջանակում 2024 թվականին հիմնվել է 5 հա ինտենսիվ այգի, որի փոխհատուցման գումարը կազմել է 40,6 մլն ՀՀ դրամ:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Յու.Ազատյանին ապահովել մարզում ՀՀ կառավարության կողմից առաջարկվող բոլոր ծրագրերի իրազեկումը՝ սերտ համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:

6. Մարզի համայնքների աշխատակազմերի և համայնքային կազմակերպությունների հաշվեկշիռներում առկա մարդատար ավտոմեքենաների կրճատման վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը զեկուցեց, որ մարզի համայնքների աշխատակազմերի և համայնքային կազմակերպությունների հաշվեկշիռներում առկա մարդատար ավտոմեքենաների կրճատման գործընթացը սկսվել է. Աշտարակ համայնքում առկա է 12 մարդատար ավտոմեքենա,որից կրճատվելու է 10-ը: Ծաղկահովիտ համայնքում առկա է 2 մարդատար ավտոմեքենա, կրճատվելու է 1-ը, Շամիրամ, Ալագյազ, Մեծաձոր համայնքներում առկա է 1-ական մարդատար ավտոմեքենա,որից Մեծաձոր համայնքինը շահագործման ենթակա չէ և սահմանված կարգով դուրս կգրվի համայնքի հաշվեկշռից: Թալին համայնքում առկա 17 մեքենայից կկրճատվի 15-ը, իսկ Ապարան համայնքում՝ 5-ից 3-ը:

Մարզպետ Ս. Մովսիսյանը գոհունակություն հայտնեց, որ մարզի համայնքի ղեկավարները արձագանքել են ՀՀ վարչապետի կոչին և աշխատանքներն արագ ու սահուն կազմակերպել:

7. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ Կառավարության «2021-2026 թվականներին կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրում» ներառված 25 դպրոցներին վերջին երեք ամսում ավելացել է նաև Կաքավաձորի միջնակարգ դպրոցը: Նշված 26 դպրոցներից 1-ի կառուցումն ավարտվել է, 21-ը կառուցման փուլում են, 1-ում շուտով կսկսվեն շինաշխատանքները, իսկ 3 դպրոցներում դեռևս մրցույթներ չեն հայտարարվել:

Նշվեց, որ մարզպետի հանձնարարությամբ ևս 12 դպրոցի ծրագիր ներկայացվել է 2026 թվականից հետո ՀՀ կառավարության դպրոցաշինական ծրագրերում ներառելու նպատակով: Կառավարության հաստատմանն է ուղարկվել մարզի դպրոցներից հավաքագրված կարիքները՝ շենքային պայմանների բարելավման և գույքի հետ կապված: 2 դպրոցի

տանիքների վերանորոգման համար մարզպետի աշխատակազմը դիմել է ԿԳՄՍՆ արագ արձագանքման ֆոնդին:

Մարզի դպրոցների լաբորատորիաների հիմնման աշխատանքները նույնպես շարունակվում են: ԿԳՄՍ նախարարության ԾԻԳ-ի և ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի համագործակցությամբ մարզի 44 դպրոցների լաբորատորիաների սենյակների նորոգման շուրջ 96 մլն դրամ արժողությամբ աշխատանքներն ավարտվել են: Այժմ ընթանում են լաբորատորիաների գործարկմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես լաբորատոր նյութերի համալրման, աշխատակիցներով ապահովման աշխատանքները: Ընդհանուր առմամբ մարզի դպրոցներում հիմնվել են բնագիտական առարկաների 61 լաբորատորիաներ:

Մարզպետ Ս. Մովսիսյանը կարևորեց իրականացված աշխատանքները և առաջարկեց առաջիկայում այցելություններ կազմակերպել դպրոցներ՝ լաբորատորաների աշխատանքների արդյունավետությունը ստուգելու համար:

8. 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց տեղեկատվություն մարզպետին կից ստեղծված մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների մասին: Նշվեց, որ հանձնաժողովի անդամների կողմից 2024 թ. սուբվենցիոն ծրագրերը դիտարկելու նպատակով իրականացվել է 341 այց: Այցերի ընթացքում մշտադիտարկման արդյունքում, արձանագրված խնդիրները երկու ուղղությամբ են իրականացվել՝ կատարված աշխատանքների որակի ապահովում և .կատարված աշխատանքների նախագծային համապատասխանություն: Բոլոր արձանագրված խնդիրները իրազեկվել են շտկման նպատակով:

Մարզպետի կողմից առանձնացվեց մշտադիտարկման աշխատանքների կարևորությունը: Նշվեց, որ բոլոր աշխատանքները միտված են օգնելու, թեթևացնելու խնդիրների լուծման գործընթացը: Առաջարկվեց համայնքի ղեկավարներին արդյունավետ աշխատանքի համար միշտ համագործակցել մարզպետի աշխատակազմի և մշտադիտարկման հանձնաժողովի հետ:

Այլ հարցերի շրջանակում Շամիրամի համայնքի ղեկավարի կողմից բարձրացվեց համայնքի հարակից միջպետական ճանապարհի վերանորոգման հարցը, ինչպես նաև Շամիրամի դպրոցի սանհանգույցի և մարզադահլիճի հիմնանորոգման խնդիրը: Մարզպետի կողմից տրվեցին համապատասխան հանձնարարություններ:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ և արդյունավետ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**